**Արձանագրություն N 2**

**<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/5>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան

08 հունվարի 2024թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ ՝ Ա. Ավագյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Ադամյան
Վ. Ղազարյան

Քարտուղար՝ Գ. Հարությունյան

1. << **ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/5**>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ՝ Համակարգ/ բացվել են 2024թ. հունվարի 8-ին, ժամը 11:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է 2024թ.-ի հունվարի 9-ին, ժամը 11:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2024թ. հունվարի 10-ին, ժամը 11:00:

**<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/5>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

10 հունվարի 2024թ.
ժամը՝ 11:00

6. << **ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/5**>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2024թ. հունվարի 9-ին, ժամը՝ 11:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|---|
| 1 | << Հոթել Աղվերան >>ՓԲԸ | Կոտայքի մ,գ. Արզական,Անտառային 1, հեռ. +374 94 001692 |
| 2 | << ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ >> ՍՊԸ | ՀՀ , ք. Ստեփանավան, Վիրահայոց փ. 80-11, հեռ. +374 77 753753 |

| 3 | ԱՁ Վոլոդյա Սիմոնյան | Վայոց Ձորի մարզ, ք. Վայք, Ալավերդյան 67, հեռ. +37493667255, |
|---|---|---|
| 4 | << ԱՍ ԹԻՄ>> ՍՊԸ | Երեվան, Էրեբունի, Տիգրան Մեծի փ., 31 շ., բն. 146 հեռ. 044077147 |

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Գնման առարկայի գնման հայտով հաստատված գներ | Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)* | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | << Հոթել Աղվերան >>ՓԲԸ | | << ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ >> ՍՊԸ | | ԱՁ Վոլոդյա Սիմոնյան | | << ԱՍ ԹԻՄ>> ՍՊԸ | |
| | | | | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | Սեմինարների կազմակերպման ծառայություններ | դրամ | 1 | 1850000 | 1370000 | - | 1415600 | 1698720 | 1830000 | - | 1900000 | - |
| 2 | Սեմինարների կազմակերպման ծառայություններ | դրամ | 1 | 1850000 | 1400000 | - | 1380000 | 1656000 | 1830000 | - | 1900000 | - |

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

9. Համակարգում << ԱՍ ԹԻՄ>> ՍՊԸ -ի կողմից 1 և 2 չափաբաժինների մասով ներկայացված հայտերը աճուրդի ամփոփումից հետո Համակարգը ավտոմատ մերժել է, քանի որ ներկայացված գնային առաջարկները գերազանցել են գնման հայտով սահմանված գները:

10. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ են հանդիսանում << Հոթել Աղվերան >>ՓԲԸ -ն 1-ին չափաբաժնի մասով և << ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ >> ՍՊԸ -ն 2-րդ չափաբաժնի մասով:

11. Հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ուղարկված հայտերը Համակարգում կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը: << ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, իսկ << Հոթել Աղվերան >> ՓԲԸ -ի կողմից ներկայացված Դիմում-հայտարարության մեջ առկա չէ վավեր էլեկտրոնային ստորագրություն:

12. Հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և << Հոթել Աղվերան >> ՓԲԸ -ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

13. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/5>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել 2024թ. հունվարի 12-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

**<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/5>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

12 հունվարի 2024թ.

ժամը՝ 10:00

14. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում << Հոթել Աղվերան >> ՓԲԸ -ի կողմից ներկայացվել է էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված նոր Դիմում-հայտարարություն:

<< Հոթել Աղվերան >> ՓԲԸ -ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, ուստի հանձնաժողովը որոշեց << Հոթել Աղվերան >> ՓԲԸ -ի հայտը գնահատել հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող:

15. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2024/5>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

- **ճանաչել ընտրված մասնակիցներ**
  - << Հոթել Աղվերան >>ՓԲԸ -ին 1-ին չափաբաժնի մասով
  - << ԼՈՌՆ ԹՐԱՎԵԼ >> ՍՊԸ -ին 2-րդ չափաբաժնի մասով
- մերժել մյուս մասնակիցների հայտերը, մասնավորապես՝
  - << Հոթել Աղվերան >>ՓԲԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով
  - << ԼՈՌՆ ԹՐԱՎԵԼ >> ՍՊԸ -ին 1-ին չափաբաժնի մասով
  - ԱՁ Վոլոդյա Սիմոնյան-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով

16. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

17. Ընտրված մասնակիցների հետ գնման պայմանագրերը կնքվելու են անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ա. Ավագյան

Հանձնաժողովի անդամներ՝

____________ Լ. Ադամյան

____________ Վ. Ղազարյան

Քարտուղար՝ ____________ Գ. Հարությունյան